

Հաստատված է

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Վարչության

19.05.2023թ.-ի Թիվ 94/01-19.05.23 որոշմամբ

Վարչության նախագահ

----- Ա. Խաչատրյան

Հրապարակման ամսաթիվը «31» մայիսի 2023թ.

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել,  
մանրամասների համար`  
Հեռախոս - (37410) 8686, +374 (10) 51-09-10 (9105) - Բանկի տեղեկատու



POS ՏԵՐՄԻՆԱԼՆԵՐԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՍՓՈՓԱԳԻՐ

1. Անվանումը - «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
Հասցե - Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1  
Էլեկտրոնային հասցե - bank@aeb.am  
Կայք - www.aeb.am  
Հեռախոս - (37410) 8686, +374(10) 51-09-10 (9105)  
Ֆաքս - (37410)53-89-04
2. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) POS տերմինալների տրամադրմամբ, սմարթֆոնի (Mobile POS) կամ հաշվիչդրամարկդային մեքենաների (այսուհետ՝ ՀԴՄ) վրա համապատասխան ծրագրային ապահովման տեղադրման միջոցով առևտրի և սպասարկման կետերի համար (այսուհետ՝ ԱՄԿ) մատուցում է անկանխիկ վճարումների ընդունման հնարավորություն (այսուհետ՝ POS տերմինալի ծառայություն), ինչպես նաև վճարային քարտերը վիրտուալ միջավայրում որպես վճարման միջոց ընդունելու հնարավորություն (այսուհետ՝ vPOS տերմինալի ծառայություն): POS և/կամ vPOS տերմինալի ծառայության տրամադրման և սպասարկման պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) սահմանում են Բանկի և առևտրի/սպասարկման կետի (այսուհետ՝ ԱՄԿ) միջև կնքված պայմանագրով, սույն Ամփոփագրով և Բանկի սակագներով:
3. Բանկը սպասարկում է ներքոնշյալ վճարային համակարգերի քարտերը՝
  - 3.1 Արմենիան Քարդ (ArCa)
  - 3.2 Visa International
  - 3.3 Europay Mastercard
  - 3.4 NSPK(MIR)
4. Բանկի կողմից Pos և/կամ vPOS տերմինալի ծառայության ակտիվացման գործընթացը տևում է սովորաբար մինչև 5 (հինգ) աշխատանքային օր: Սակայն հնարավոր է հիշյալ ծառայությունը ակտիվացնել ավելի սեղմ ժամկետներում, ինչը ենթակա է քննարկման ԱՄԿ-ի և Բանկի միջև:
5. POS և/կամ vPOS տերմինալով անկանխիկ գործարքների դիմաց Բանկի կողմից գանձվող միջնորդավճարների սակագները ըստ սպասարկման կետերի սահմանվում են պայմանագրային հիմունքներով: Ընդ որում POS և/կամ vPOS տերմինալի ծառայության ակտիվացման կամ սպասարկման վճար Բանկի կողմից չի սահմանվում:
6. Բանկը՝ ժամանակավոր, անհատույց օգտագործման իրավունքով, ԱՄԿ-ին տրամադրում է գործունեության համար առավել նպատակահարմար POS տերմինալների ծառայության ակտիվացման համար անհրաժեշտ սարքավորումներ:
7. POS տերմինալի ծառայության ակտիվացման գործընթացը ավարտելուց հետո Բանկի աշխատակիցը ԱՄԿ-ի համապատասխան աշխատակցին ծանոթացնում է POS տերմինալի շահագործման բոլոր կանոններին և տրամադրում է սպասարկող քարտերի լոգոտիպերը:

8. POS տերմինալի ծառայության ակտիվացումից հետո Բանկը անվճար տրամադրում է Բանկի լոգոտիպով անդորրագրերի թղթերը:
9. ԱՄԿ-ի կողմից POS տերմինալով ամսական նվազագույնը շրջանառության չապահովման և POS տերմինալի սպասարկման պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վճարի/լրացուցիչ սպասարկման վճարի չափ.

<b>9.1 Նվազագույն շրջանառության գումար*</b>	<b>Ամսական սպասարկման վճար (ներառյալ հարկերը)</b>
POS տերմինալով (բացառությամբ Mobile POS հավելվածով) իրականացված ամսական շրջանառությունը փոքր է 300,000 ՀՀ դրամից	3,000 ՀՀ դրամ
Mobile POS հավելվածով իրականացված ամսական շրջանառությունը փոքր է 50,000 ՀՀ դրամից	1,000 ՀՀ դրամ
<b>9.2 Pos տերմինալի պայմանագրի դադարեցման վճար (ներառյալ հարկերը)</b>	
Բանկի կողմից տրամադրված POS տերմինալի կամ ՀԴՄ-ով ակտիվացումից հետո մեկ տարվա ընթացքում պայմանագրի վաղաժամ դադարեցման և/կամ ՀԴՄ-ն փոխարինելու դեպքում	50,000 ՀՀ դրամ
Mobile POS հավելվածը ակտիվացնելուց հետո մեկ տարվա ընթացքում պայմանագրի վաղաժամ դադարեցման դեպքում	10,000 ՀՀ դրամ

\* շրջանառության համար հիմք է ընդունվում օրացուցային ամսվա ընթացքում տվյալ ԱՄԿ-ում ակտիվացված բոլոր POS տերմինալների միջոցով կատարված գործարքների հանրագումարը

10. ԱՄԿ-ի կողմից 3 ամիս շարունակ POS տերմինալով իրականացված անկանխիկ գործարքների առնվազն 900,000 ՀՀ դրամ գումարի չափով շրջանառություն չապահովելու պարագայում Բանկն իրավունք ունի վաղաժամկետ լուծել POS տերմինալի ծառայության պայմանագիրը և դադարեցնել ԱՄԿ սպասարկումը:
11. ԱՄԿ-ի կողմից շարունակական 180 օր և ավել ժամանակահատվածում vPOS տերմինալով իրականացված շրջանառության ընդհանուր գումարը նվազագույնը 1,000,000 ՀՀ դրամ չապահովելու դեպքում՝ Բանկն իրավասուն է միակողմանի դադարեցնել vPOS տերմինալի սպասարկումը
12. ԱՄԿ-ը քարտերի սպասարկումը իրականացնում է բացառապես գանձապահների ուսուցման համար նախատեսված փաստաթղթերի փաթեթով սահմանված ընթացակարգերով:

13. ԱՄԿ-ն պարտավոր է ապահովել POS տերմինալով ձևավորված փաստաթղթերի (գործարքների անդորրագրերի/սլիպ/) պատշաճ պահպանությունը գործարքի կատարման օրվանից առնվազն 6 (վեց) ամիս և դրանց տրամադրումը Բանկին՝ վերջինիս պահանջը ստանալուց հետո երեք բանկային օրում:
14. ԱՄԿ-ն իրավունք չունի կատարված անկանխիկ գործարքների դիմաց քարտապաններին տրամադրել կանխիկ գումար:
15. ԱՄԿ-ի կողմից քարտով կատարվող գործարքները չեն կարող մասնատվել 2 (երկու) կամ ավելի առանձին գործարքների:
16. vPOS ծառայության տերմինալները էլեկտրոնային համակարգերով առցանց վճարումների ընդունման հնարավորություն է, որը ներդրվում է կայքում և/կամ բջջային հավելվածում:
17. vPOS ծառայության տերմինալի գրանցման համար անհրաժեշտ է ընկերության տնօրենի կողմից ներկայացվի վիրտուալ տերմինալի գրանցման դիմում՝ տրամադրելով Բանկին կայքի/հավելվածի URL հասցե (դոմենը), իրական IP հասցեն, հաշվեհամարը: Բանկում դրամային հաշվի բացակայության դեպքում, vPOS տերմինալների համար Բանկը անվճար բացում է ՀՀ դրամով բանկային հաշիվ: Հասցեն պարտադիր պետք է լինի <https://> դասիչով, կայքի գրանցումը(domain) իրականացված լինի Հայաստանում, իսկ կայքում/հավելվածում պարտադիր արտացոլված լինեն սպասարկման վճարման կարգը, պատասխանատվության շրջանակը, դիմում-բողոքների ընթացակարգը կամ բոլորը միասին (Policy, Terms & Conditions):
18. Բանկը հաճախորդին է տրամադրում vPOS տերմինալի ինտեգրման թեստային(Test) տվյալները, որի ինտեգրումից հետո միայն վերջինիս գրավոր հաստատման դեպքում տրամադրում է vPOS տերմինալի իրական (Real) միջավայրի տվյալները:
19. Հաճախորդի կողմից դիմումում նշված էլեկտրոնային հասցեից է ընդունվում և ուղարկվում էլեկտրոնային բոլոր գրագրությունները, ներառյալ թեստային և իրական տվյալները, իսկ վերջինիս փոփոխության դեպքում ներկայացնում է դրանց փոփոխման վերաբերյալ դիմում ընկերության տնօրենի կողմից:
20. vPOS ծառայության տերմինալները Բանկի կողմից գրանցվում են ArCa 3D Secure, MasterCard Securecode, Visa Secure համակարգերին գործարքները 3D Secure հավաստմամբ իրականացվելու համար: Այն դեպքում, երբ հաճախորդի չի ցանկանում իր կայքի/հավելվածի գործարքները իրականացվեն 3D Secure հավաստմամբ, ապա ներկայացնում է դիմում-պարտավորագիր հետագայում հետգանձման պահանջի դեպքում vPOS տերմինալի հաշվին համապատասխան գումար չլինելու դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում հետգանձված գումարը հաշվին ապահովելու համար:
21. POS և/կամ vPOS ծառայության տերմինալներով իրականացված գործարքների գումարները մուտքագրվում են հաճախորդի տերմինալի հաշվեհամարին ոչ ուշ, քան «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնի կողմից սպասարկման կետի հաշվարկային տեղեկատվությունը ստանալուց 1(մեկ) բանկային օրվա ընթացքում:
22. Բանկը իրավունք ունի անվավեր համարել այն գործարքները, որոնք չեն ստացել հավաստագրում Բանկի և «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնի կողմից սահմանված պահանջների և կանոնների համաձայն և/կամ չեն ներկայացվել Բանկ գործարքի կատարումից հետո 5 (հինգ) օրյա ժամկետում:

23. Բանկը պատասխանատվություն չի կրում POS և/կամ vPOS ծառայության միջոցով ապօրինաբար գործածված Քարտերով կամ քարտային տվյալներով կատարված գործարքների համար:
24. ԱՄԿ-ի կողմից վճարային քարտով վճարումներ ընդունելիս ԱՄԿ-ին արգելվում է՝ վճարային քարտի տվյալների հավաքում, ձեռքբերում, պահում, հրապարակում, փոխանցում երրորդ անձանց կամ Բանկի և սպասարկման կետի միջև կնքված պայմանագրով սահմանված նպատակից բացի որևէ այլ եղանակով օգտագործումը: Սույն կետով սահմանված պահանջների չկատարման ցանկացած դեպքի մասին ԱՄԿ-ն պարտավորվում է անհապաղ տեղեկացնել Բանկին: Սույն կետով սահմանված պահանջների խախտման դեպքում՝ ԱՄԿ-ն կրում է դրա արդյունքում Բանկին և/կամ Քարտապանին պատճառված այլ վնասները լրիվ ծավալով հատուցելու պատասխանատվությունը: